ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 դեկտեմբերի 2025թ. թիվ 877-Ա

Ա.ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածի 1-ին մասի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2024 թվականի փետրվարի 29-ի թիվ 112-Ա որոշման 1-ին կետը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Անահիտ Հարությունի Վարդանյանին 2026 թվականի հունվարի 5-ից ազատել «ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Խ.Աբովյանի անվան թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգողի պաշտոնից և լուծել նրա հետ 2024 թվականի մարտի 1-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:

2. «ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Խ.Աբովյանի անվան թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահին՝

Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածով սահմանված կարգով Անահիտ Վարդանյանի հետ կատարել վերջնահաշվարկ:

3. Մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետին՝

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով սույն վարչական ակտը ստորագրվելուց հետո եռօրյա ժամկետում էլեկտրոնային փոստի միջոցով կամ առձեռն ծանուցել հասցեատիրոջը:

Ստորագրող
ԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ
1204920311

2025-12-30 12:37:08 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2025թ. դեկտեմբերի 30
ք.Վանաձոր